

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

**ԴԱՍԸՆԹԱՑ 1.2**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ  
/քննության հարցեր/**

**ՄԱՐՏ 2020թ.**

**ԲԱԺԻՆ Ա.**

**Բազմակի ընտրության հարցեր**

*Յուրաքանչյուր հարցի արժեքը 2 միավոր է*

1. Մեր ձեռքի տակ են ընկերության արտադրությանը և միջին ծախսերին վերաբերող հետևյալ տվյալները՝ ամսական արտադրության 2 մակարդակների համար. Ընկերությունն ունի միայն մեկ արտադրատեսակ:

Արտադրության ծավալ .....	1,000 միավոր	2,000 միավոր
Ուղղակի նյութեր .....	\$15.20 /միավոր	\$15.20 /միավոր
Ուղղակի աշխատանք.....	\$30.50 /միավոր	\$30.50 /միավոր
Արտադրական վերադիրներ .....	\$54.10/միավոր	\$37.40 /միավոր

Հաստատուն ծախսերը ամսվա համար կլինեն.

- A) \$74,800
- B) \$54,100
- C) \$99,800
- D) \$33,400

---

2. 365,000 ԱՄՆ դոլար հասույթի դեպքում *Էրնա* ընկերության համախառն շահույթը 20,000 ԱՄՆ դոլարով պակաս է սահմանային շահույթից, նրա գույտ գործառնական շահույթը կազմում է 70,000 ԱՄՆ դոլար, իսկ իրացման և վարչական ծախսերը հավասար են 130,000 ԱՄՆ դոլարի: Վաճառքի այս մակարդակի համար *Էրնայի* սահմանային շահույթը կլինի:

- A) \$295,000
- B) \$180,000
- C) \$220,000
- D) \$200,000

---

3. Եթե ընկերությունը իր միավորի վաճառքի գինը մեծացնի \$2-ով՝ պայմանավորված իր փոփոխական աշխատուժի նույն չափով թանկացմամբ, ապա ծախսաձածկման կետը (break-even)՝ արտահայտված միավորներով՝

- A) Կմնա նույնը.
- B) Կաճի.
- C) Կնվազի.
- D) Կփոխվի, բայց փոփոխության ուղղությունը պարզ չի.

---

4. Ծախսաձածկման կետի դեպքում ընկերությունն ունի հետևյալ ցուցանիշները՝  
Հասույթ ..... \$120,000  
Հաստատուն ծախսեր..... \$30,000  
Եթե ընկերությունը ցանկանում է ունենալ \$12,000 շահույթ, ապա ինչպիսին պիտի լինի դրան համապատասխան հասույթը?

- A) \$132,000
- B) \$136,000

C) \$168,000

D) \$176,000

---

5. Ձեռնարկությունը հաջորդ տարվա համար կատարել է հետևյալ կանխատեսումները.

Հասույթ ..... \$280,000

Շահույթ ..... \$21,000

Սահմանային շահույթ/հասույթ հարաբերություն..... 70%

Ինչպիսին կլինի Ձեռնարկության ծախսաձածկման կետը հաջորդ տարվա համար, արտահայտված հասույթով (դոլարներով)?

A) \$120,000

B) \$181,300

C) \$196,000

D) \$250,000

---

6. Ընկերությունը արտադրում է մեկ արտադրատեսակ: Անցյալ տարի ընկերությունը ունեցել է 92,000 ԱՄՆ դոլարի շահույթ՝ հաշվարկված ծախսերի լրիվ կլանման մեթոդով, և 98,600 ԱՄՆ դոլարի շահույթ՝ հաշվարկված սահմանային ծախսերի մեթոդով: Եթե վերջին երկու տարիների ընթացքում հաստատուն արտադրական վերադիր ծախսը միավորի կտրվածքով կազմել է \$ 3,00, և եթե արտադրությունը անցյալ տարի եղել է 18,000 միավոր, ապա վաճառքը միավորներով կազմել է.

A) 24,600

B) 20,200

C) 15,800

D) 15,000

---

7. Կորպորացիան արտադրում է միայն մեկ արտադրատեսակ: Անցյալ տարի ընկերությունը ունեցել է 50,000 ԱՄՆ դոլարի զուտ գործառնական շահույթ՝ այն հաշվարկելով սահմանային ծախսերի մեթոդով: Սկզբնական և վերջնական պաշարները եղել են համապատասխանաբար 13,000 միավոր և 18,000 միավոր: Եթե միավորին բաժին ընկնող հաստատուն արտադրական վերադիր ծախսը կազմում է 2 ԱՄՆ դոլար, ապա ինչպիսի՞ն կլինեն զուտ գործառնական շահույթը, եթե օգտագործվեր վերադիրների լրիվ կլանման մեթոդը?

A) \$40,000

B) \$50,000

C) \$60,000

D) \$86,000

---

8. Ընկերությունը արտադրում է միայն մեկ արտադրատեսակ: Անցյալ տարի ընկերության ընկերության զուտ գործառնական շահույթը, հաշվարկված ծախսերի լրիվ կլանման մեթոդով, կազմել է \$ 6 400, իսկ նույն մեծությունը, հաշվարկված սահմանային ծախսերի մեթոդով, կազմել է 9100 դոլար: Ընկերության միավոր արտադրանքի ինքնարժեքը 17 դոլար էր՝ սահմանային ծախսերի դեպքում, իսկ լրիվ կլանման մեթոդի դեպքում՝ 20 դոլար: Եթե

վերջնական պաշարները բաղկացած էին 2100 միավորից, սկզբնական պաշարները միավորներով պիտի լինեին.

- A) 1,200
  - B) 2,100
  - C) 3,000
  - D) 4,800
- 

9. Արտադրական ձեռնարկության գործառնական արդյունքներն անցյալ ամսվա համար հետևյալն են.

Պատրաստի արտադրանքի սկզբնական պաշարներ..... \$74,000  
Պատրաստի արտադրանքի վերջնական պաշարներ..... \$50,000  
Հասույթ ..... \$438,000  
Համախառն շահույթ ..... \$63,000

Ինչպիսին է եղել արտադրված միավորների արժեքը ամսվա կտրվածքով?

- A) \$375,000
  - B) \$414,000
  - C) \$399,000
  - D) \$351,000
- 

10. Կորպորացիայի պահեստում կա մի նյութ, որն ի սկզբանե արժեցել է 73500 դոլար: Նյութը, իր այսօրվա վիճակում, ունի 45,600 ԱՄՆ դոլարի մնացորդային արժեք, սակայն եթե այն վերամշակվի, ծախսելով 6,600 դոլար, ապա կարող է վաճառվել 58100 դոլարով: Ինչպիսի՞ն կլինի ընկերության կողմից նյութի վերամշակման և հետագա վաճառքի լրացուցիչ ազդեցությունը ընդհանուր շահույթի վրա, համեմատած մնացորդային արժեքով այն վաճառելու հետ:

- A) -\$22,000
  - B) -\$67,600
  - C) \$51,500
  - D) \$5,900
- 

11. Ընկերության Ա արտադրամասի հաջորդ տարվան վերաբերող կանխատեսումները բերված են ստորև.

Սահմանային շահույթ ..... \$1,500,000  
Հաստատուն ծախսեր..... \$1,700,000  
Վնաս ..... \$ (200,000)

Եթե Ա արտադրամասը փակվի, ապա վերը նշված հաստատուն ծախսերից \$1,000,000 կպակասի: Ինչպիսին կլինի արտադրամասը փակելու որոշման ազդեցությունը ընկերության շահույթի վրա?

- A) \$500,000 նվազում
  - B) \$800,000 աճ
  - C) \$1,000,000 աճ
-

D) \$1,200,000 աճ

---

12. Ձեռնարկությունն ընդամենը ձեռք է բերել 6850 կիլոգրամ հումք, որի համար վճարել է 21920 դոլար: Նյութի գնային շեղումը եղել է բարենպաստ և հավասար \$1,370: Հումքի մեկ կիլոգրամի ստանդարտ (նորմատիվային) գինը պետք է լինի՝
- A) \$0.20
  - B) \$3.00
  - C) \$3.20
  - D) \$3.40
- 

13. Ընկերության հիմնական արտադրատեսակի մեջ ուղղակի աշխատանքի վերաբերյալ մեզ տրամադրված է հետևյալ տեկատվությունը.

Մեկ միավոր պատրաստելու համար անհրաժեշտ

ժամանակ .....2 ուղղակի աշխատանքի ժամ

Ուղղակի աշխատուժ..... 50 աշխատող

Շաբաթական արդյունավետ աշխատանքի

ժամեր մեկ աշխատողի գծով..... 40 ժամ

Շաբաթական աշխատավարձ մեկ աշխատողի գծով...\$500

Աշխատողների պարգևավճար՝ հաշվառվում է

որպես ուղղակի աշխատանք..... 20% աշխատավարձից

Ինչպիսին է եղել ընկերության արտադրանքի մեկ միավորի մեջ ուղղակի աշխատանքի ստանդարտ ինքնարժեքը?

- A) \$30
  - B) \$24
  - C) \$15
  - D) \$12
- 

**Հետևյալ տեղեկատվությունը վերաբերում է 14-րդ և 15-րդ հարցերին**

Ընթացիկ տարվա սկզբին, ըստ ընկերության գնահատականի, արտադրական վերադիրները կկազմեն 70,000 ԱՄՆ դոլար, իսկ գործունեության ծավալը հավասար կլինի 10,000 մեքենա ժամի: Լրիվ արտադրական կարողության դեպքում գործունեության ծավալը 14,000 մեքենա-ժամ է: Տարեկան փաստացի արտադրական վերադիրները եղել են 63,300 դոլար, իսկ գործունեության իրական մակարդակը՝ 10,100 մեքենա ժամ:

14. Եթե ընկերության վերադիրների նախապես հաշվարկված կլանման դրույքը հիմնվում է գնահատված մեքենա-ժամերի քանակի վրա, ապա այն հավասար կլինի՝

- A) \$6.27
  - B) \$7.00
  - C) \$5.00
  - D) \$6.33
- 

15. Եթե ընկերության վերադիրների նախապես հաշվարկված կլանման դրույքը հիմնվում է գնահատված մեքենա-ժամերի քանակի վրա, ապա վերադիրները կլինեն՝

- A) \$12,800 գերկլանված
- B) \$12,800 թերկլանված

C) \$7,400 գերկլանված

D) \$7,400 թերկլանված

16. Պրոցեսը ընկերությունը օգտագործում է ԱՄԱԵ (FIFO) մեթոդը իր փուլային (պրոցեսային) ծախսերի համակարգում: Արտադրամաս Ա-ի սկզբնական անավարտ պաշարները բաղկացած էին 15,000 միավորից՝ 100% -ով ավարտված նյութերի գծով և ավարտված 40%՝ փոխարկման ծախսերի գծով: Սկզբնական անավարտի արժեքը կազմել է 31,000 դոլար: Ամսվա ընթացքում ընդհանուր առմամբ փոխանցվել է դեպի ելք 40000 միավոր: Մեկ համարժեք միավորի համար ծախսերը հաշվարկվել են 1,30 դոլար նյութերի համար և 2,20 դոլար՝ փոխարկման ծախսերի համար: Ավարտված և դեպի ելք փոխանցված միավորների արժեքը եղել է.

A) \$140,000

B) \$138,300

C) \$131,700

D) \$118,500

17. Անուղղակի ինքնարժեք հաշվարկելիս ընկերությունն օգտագործում է նախապես որոշված կլանման դրույք՝ հիմնված ուղղակի աշխատանքի ժամերի վրա: Հաջորդ տարվա համար ընկերության նախատեսված ծախսերն են.

Ուղղակի նյութեր.....	\$3,000
Ուղղակի աշխատավարձ.....	\$20,000
Մաշվածության ծախս .....	\$6,000
Վարձակալություն .....	\$12,000
Իրացման անձնակազմի աշխատավարձ.....	\$29,000
Կոմունալ ծախսեր .....	\$15,000
Անուղղակի աշխատավարձ.....	\$6,000

Նախատեսված է նաև, որ տարվա ընթացքում ուղղակի աշխատաժամերը կկազմեն 10000 ժամ. Հետևապես նախապես որոշված կլանման դրույքը կկազմի՝

A) \$3.90

B) \$5.90

C) \$6.80

D) \$9.10

### Հետևյալ տեղեկատվությունը վերաբերում է 18-րդ և 19-րդ հարցերին

Կաթնամթերքը ընկերությունը իր արտադրած մածունի ինքնարժեքը հաշվարկելիս օգտագործում է նորմատիվային ինքնարժեքի համակարգ: Ըստ նորմատիվի, մածունի մեկ շի մեջ օգտագործվում է 0,8 լիտր կաթ՝ յուրաքանչյուր լիտրը 2,30 դոլար ստանդարտ ինքնարժեքով:

Հունիս ամսվա ընթացքում ընկերությունը գնել է 75000 լիտր կաթ, ընդհանուր արժեքը \$171 000: Նույն ամսում Կաթնամթերքը այդ քանակից 64000 լիտրը օգտագործել է 71500 շի մածուն արտադրելու համար:

18. Ինչպիսին է Կաթնամթերքի նյութերի գնային շեղումը հունիս ամսվա համար?

A) \$1,500 Բարենպաստ

B) \$15,640 Անբարենպաստ

C) \$17,250 Բարենպաստ

D) \$23,800 Բարենպաստ

19. Ինչպիսին է Կաթնամթերքի նյութերի օգտագործման (քանակային) շեղումը հունիս ամսվա համար?

A) \$1,500 Բարենպաստ

B) \$15,640 Անբարենպաստ

C) \$17,250 Բարենպաստ

D) \$23,800 Բարենպաստ

**Հետևյալ տեղեկատվությունը վերաբերում է 20-րդ և 21-րդ հարցերին**

Վեշն ընկերությունն արտադրում է անիվներ, որոնք հենց ինքն էլ հետագայում օգտագործում է հեծանիվների արտադրության մեջ: Տարեկան 100000 անիվների արտադրության համար պահանջվող ծախսերը հետևյալն են.

Ուղղակի նյութեր..... \$30,000

Ուղղակի աշխատանք ..... \$50,000

Փոփոխական վերադիրներ ..... \$20,000

Հաստատուն վերադիրներ ..... \$70,000

Մի կողմնակի մատակարար առաջարկել է վաճառել Վեշնին նույն տիպի անիվներ՝ 1 հատը \$1.25 գնով: Եթե անիվները ձեռք բերվեն արտաքին մատակարարից, կարելի է խնայել տարեկան \$15,000 հաստատուն ծախսեր, իսկ ներկայումս օգտագործվող հաստոցները կարելի է վարձով տալ մեկ այլ ձեռնարկության՝ տարեկան \$45000 վարձավճարով:

20. Եթե Վեշնն որոշի գնել անիվները արտաքին մատակարարից, արտադրելու փոխարեն, ապա այդ որոշման արդյունքում Վեշնի շահույթը փոփոխությունը կկազմի.

A) \$35,000 աճ

B) \$10,000 նվազում

C) \$45,000 աճ

D) \$70,000 աճ

21. Ո՞րն է այն ամենաբարձր գինը, որը Վեշնն կարող էր վճարել անիվի արտաքին մատակարարին մեկ անիվի համար որպեսզի նրա համար միննույն լինի՝ արտադրել անիվները թե գնել դրանք ?

A) \$1.70

B) \$1.60

C) \$1.55

D) \$1.15

22. Ընկերությունը իր արտադրանքի ինքնարժեքը հաշվարկում է փուլային կալկուլյացիայի միջոցով, օգտագործելով ԱՄԱԵ (FIFO) մեթոդը: Բոլոր նյութերը մտցվում են արտադրություն փուլի (պրոցեսի) սկզբում՝ Առաջին արտադրամասում: Հունվար ամսվա համար Առաջին արտադրամասի վերաբերյալ մեզ է տրամադրված հետևյալ տեղեկատվությունը.

*Միավորներ*

Անավարտ արտադրանք հունվարի 1-ի դրությամբ,

(40% ավարտված ձևափոխման ծախսերի գծով) ..... 500

Հունվար ամսին սկսված..... 2,000

Հունվար ամսվա ընթացքում փոխանցված Երկրորդ արտադրամաս..... 2,100  
 Անավարտ արտադրանք հունվարի 31-ի դրությամբ,  
 (25% ավարտված ձևափոխման ծախսերի գծով)..... 400

Որոնք են հունվար ամսվա համար համարժեք միավորները?

Նյութեր	Ձևափոխման ծախսումներ
A) 2,500	2,200
B) 2,500	1,900
C) 2,000	2,200
D) 2,000	2,000

23. Ընկերությունն օգտագործում է ԱՄԱԵ (FIFO) մեթոդն իր արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման փուլային համակարգում: Սեպտեմբեր ամսին ձևման արտադրամասում սկզբնական և վերջնական պաշարների միավորները ձևափոխման ծախսումների գծով ավարտված էին 80% -ով և 25% -ով համապատասխանաբար: Սեպտեմբերի համար արտադրամասի վերաբերյալ ունենք նաև հետևյալ տվյալները.

	Միավորներ	Ձևափոխման ծախսեր
Աշխատանքը սկզբնական պաշարներում.....	20,000	\$40,000
Ամսվա ընթացքում սկսված միավորների քանակ և կատարված ծախսումներ.....	150,000	\$186,000
Թողարկված միավորների քանակ.....	130,000	

Ձևափոխման ծախսերի մեկ համարժեք միավորի ինքնարժեքը կլորացված հավասար կլինի.

- A) \$1.48
- B) \$1.50
- C) \$1.16
- D) \$1.82

24. Ստորև ներկայացված են տվյալներ ձևափոխման կողմից իր արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող պահեստամասի վերաբերյալ.

Օրական օգտագործման նվազագույն քանակ	350
Օրական օգտագործման միջին քանակ	400
Օրական օգտագործման առավելագույն քանակ	450
Պատվերի կատարման ժամկետ	2-3 օր
Պատվերի քանակ	1,100

Պահեստամասի պաշարների առավելագույն մակարդակը կազմում է.

- A) 1,750 միավոր
- B) 1,250 միավոր
- C) 1450 միավոր
- D) 2,000 միավոր

25. Պատվերի քանակը որոշելիս, ձևափոխման օգտագործում է Պաշարների Օպտիմալ Քանակի (ՊՕՔ) մոդելը: Գալիք հաշվետու ժամանակաշրջանի համար առկա է հետևյալ տեղեկատվությունը.

Պատվերի ծախսեր	\$5 մեկ պատվերի համար
Փոխադրման ծախսեր	\$50 մեկ պատվերի համար

Պահպանման ծախսեր 10% գնման գնից, գումարած տարեկան \$0,2/միավոր  
Տարեկան պահանջարկ 4000 միավոր  
Գնման գին \$15 մեկ միավորի համար  
Ինչպիսին է Պաշարների Օպտիմալ Քանակը (ՊՕՔ)?

- A) 153 միավոր
  - B) 170 միավոր
  - C) 509 միավոր
  - D) 485 միավոր
-

**ԲԱԺԻՆ Բ. Խնդիրներ.**

**Բոլոր 5 խնդիրները պարտադիր են**

**Խնդիր 1**

Ընկերությանը առաջարկվել է մի պայմանագիր, որի գծով անհրաժեշտ է գնահատել պայմանագրին առնչվող ծախսերը: Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը.

**Նյութեր`** Պայմանագրի կատարման համար պահանջվում է 2 տեսակի նյութ: 3000 կգ Ա տեսակի նյութ և 200 կգ Բ տեսակի նյութ : Տվյալ պահին ընկերության պահեստում առկա 2000 կգ Ա նյութի ամբողջ քանակը օգտագործվում է ընկերության սովորական գործունեության ընթացքում արտադրվող X արտադրանքի արտադրության մեջ: Ա տեսակի նյութը գնվել էր նախորդ ամսում` ընդամենը վճարելով 19600 դոլար: Այդ պահից հետո Ա նյութի գինը աճել էր 5 տոկոսով:

Բ տեսակի նյութից պահեստում առկա է 250 կգ: Այն ընկերության սովորական գործունեության ընթացքում չի օգտագործվում, սակայն կարող է վաճառվել 1 կգ-ը 11 դոլարով:

**Աշխատանքային ծախսումներ`** պայմանագրի կատարման համար պահանջվում է 800 ժամ հմուտ աշխատուժ, որը վճարվում է 1 ժամը 9,5 դոլարով: Բոլոր աշխատողները ամբողջությամբ ներգրավված են X արտադրանքի արտադրության մեջ, աշխատուժը հանդիսանում է սակավ ռեսուրս և դրսից համապատասխան մասնագետներ հավաքագրել հնարավոր չէ:

Ընկերությունում թողարկվող X արտադրանքի վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը`

	Ցուցանիշներ	1 միավորի գծով \$
1	Վաճառքի գին	100
2	Որակյալ, հմուտ աշխատուժի գծով ծախսեր	38
3	Այլ փոփոխուն ծախսեր	22
4	Սահմանային շահույթ	40

**Պահանջվում է որոշել**

**ա)**

- 1. Ա նյութի գծով պայմանագրին առնչվող ծախսը
- 2. Բ նյութի գծով պայմանագրին առնչվող ծախսը
- 3. Աշխատուժի գծով պայմանագրին առնչվող ծախսը

**(7 միավոր)**

**բ)** Մեկնաբանել ինչպես պետք է որոշել առնչվող ծախսերը հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսերի գծով:

**(3 միավոր)**

**Ընդամենը 10 միավոր**

## Խնդիր 2

Շինարարական ընկերությունը տարվա ընթացքում օգտագործում է 1,920 պարկ ցեմենտ, որը ձեռք է բերում շինանյութի մեծածախ առևտրով զբաղվող իր միակ *Կոնկրետ* մատակարարից: Յուրաքանչյուր պարկ ցեմենտն արժի 15,000 ՀՀ դրամ: Ցեմենտի պատվիրման ծախսերը կազմում են յուրաքանչյուր պատվերի համար 500 ՀՀ դրամ: Ընդ որում, ցեմենտի մատակարարման համար անհրաժեշտ է 3 օր: Ցեմենտով պարկերի պահպանման նպատակով ձեռնարկությունը վարձակալում է համապատասխան պահեստ, որտեղ նաև ապահովում է պահպանման համար անհրաժեշտ խոնավության և ջերմաստիճանային պայմաններ: Յուրաքանչյուր պարկ ցեմենտի պահպանման ծախսերը կազմում են տարեկան 1,200 ՀՀ դրամ :

Վերջերս ձեռնարկության ղեկավարությանը ցեմենտի մանրածախ առևտրով զբաղվող մեկ այլ՝ *Ուիլթ* մատակարարն առաջարկել է մատակարարել ցեմենտ՝ յուրաքանչյուր պարկը 15,800 ՀՀ դրամով: Քանի որ առաջարկվող ցեմենտի պարկերն ունեն անթափանց փաթեթավորում, ձեռնարկության պահպանման ծախսերը մեկ պարկի համար կնվազեն մինչև 640 ՀՀ դրամ: Ցեմենտի պատվիրման ծախսերը կազմում են 600 ՀՀ դրամ, իսկ մատակարարումը կիրականացվի պատվերն ուղարկելուց 3 օրվա ընթացքում:

**Պահանջվում է՝**

1) Հաշվարկել Պատվերի Օպտիմալ քանակը (EOQ) երկու մատակարարներից ձեռքբերումների դեպքում: (3.5 միավոր)

2) Հաշվարկել ցեմենտի մատարարման հետ կապված ընդհանուր ծախսումները (ձեռքբերման գին, պատվիրման և պահպանման ծախսեր) երկու մատակարարներից ձեռքբերումների դեպքում: (3.5 միավոր)

Ձեռնարկությունը հրաժարվել է *Ուիլթ* մատակարարի առաջարկից: Այդ կապակցությամբ *Կոնկրետը* ձեռնարկությանը տրամադրել է 0.5% զեղչ, եթե ձեռնարկությունը միանգամից պատվիրի 200 և ավելի ցեմենտի պարկ:

**Պահանջվում է՝**

3) Հաշվարկել արդյոք ձեռնարկությունը պետք է ընդունի *Կոնկրետի* առաջարկը:

(3 միավոր)

Ընդամենը՝ 10 միավոր

**Խնդիր 3**

Ընկերությունը արտադրում և վաճառում է 2 տեսակի արտադրանք՝ M և P և ցանկանում է շահույթը հասցնել առավելագույնի (շահույթի մաքսիմալացում):

M տեսակի արտադրանք ընկերությունը կարող է վաճառել ցանկացած քանակությամբ: P տեսակի արտադրանքի տարեկան պահանջարկը սահմանափակված է 40000 միավորով: M և P արտադրանքների վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը

	1 միավոր M արտադրանք \$	1 միավոր P արտադրանք \$
1 միավորի վաճառքի գին	200	250
Ուղղակի նյութեր (1կգ- ի գինը \$5 )	60	40
Ուղղակի աշխատանք (1 ժամվա դրույքը \$10)	50	80
Այլ փոփոխական ծախսեր	60	90
<b>Ընդամենը փոփոխական ծախսեր</b>	<b>170</b>	<b>210</b>

Հաջորդ տարվա համար նյութի մատակարարումը սահմանափակվում է 540000 կգ-ով, իսկ աշխատուժի գծով նույնպես առկա է սահմանափակում, որը կազմում է 400000 ժամ:

Սահմանափակումների գծանկարի կառուցում չի պահանջվում:

Հաշվարկները կատարել հավասարումների համակարգի լուծման միջոցով:

**Պահանջվում է՝**

- a) Ձևակերպել սահմանափակումների հավասարումները/անհավասարությունները (3 միավոր)
- b) Ձևակերպել նպատակային ֆունկցիայի անհավասարությունը (1 միավոր)
- c) Հաշվարկել հաջորդ տարվա օպտիմալ արտադրական պլանը միավորով (4 միավոր)
- d) Հաշվարկել սահմանային շահույթի ընդհանուր գումարը օպտիմալ արտադրական պլանի դեպքում (2 միավոր)

**Ընդամենը 10 միավոր**

**Խնդիր 4**

Ռեժանս ձեռնարկությունը արտադրում է 4 տեսակ ժամացույց, որի համար արտադրության ընթացքում օգտագործվում է ուղղակի աշխատուժ: Աշխատակիցներին վճարում են նվազագույն ամսական աշխատավարձ, նույնիսկ եթե այդ ամսվա ընթացքում չի պատրաստվել ոչ մի տեսակ ժամացույց: Ինչպես նաև յուրաքանչյուր պատրաստված ժամացույցի համար վճարվում է ֆիքսված գումար: Հոկտեմբեր ամսվա համար հայտնի են հետևյալ տվյալները.

Արտադրանք	Բյուջե		Փաստացի
	Միավորներ	Ուղղակի աշխատուժի ժամեր	Միավորներ
Ա	15,000	3,000	12,000
Բ	20,000	8,000	25,000
Գ	14,000	7,000	16,000
Դ	6,000	9,000	5,000

Հոկտեմբերի ընթացքում փաստացի ուղղակի աշխատուժի ժամերը կազմում են 29,000 ժամ, իսկ փաստացի վերադիր ծախսումները 110,000 հազ. ՀՀ դրամ: Վերադիր ծախսումները կլանվում են ուղղակի աշխատուժի ժամերի հիման վրա: Վերադիր ծախսումների կլանման նորմատիվային դրույքը կազմում է 4 հազ ՀՀ դրամ:

**Պահանջվում է՝****1. Հաշվարկել՝**

- a) Փաստացի աշխատածամանակ/նորմատիվային աշխատածամանակ հարաբերակցությունը արտահայտված տոկոսով ( տասնորդական նիշի ճշտությամբ)
 

(2 միավոր)
- b) Աշխատանքի արդյունավետության տոկոսը
 

(2 միավոր)
- c) Վերադիր ծախսերի ծախսային շեղումը
 

(2 միավոր)
- d) Վերադիր ծախսերի արդյունավետության շեղումը
 

(2 միավոր)

2. Հաշվի առնելով ձեռնարկության աշխատավարձի վճարման քաղաքականությունը գրաֆիկային եղանակով ներկայացնել ձեռնարկության աշխատուժի ծախսումները հոկտեմբեր ամսվա համար (թվային տվյալների ներկայացում չի պահանջվում):

(2 միավոր)

Ընդամենը՝ 10 միավոր

**Խնդիր 5**

*Մանդարին* միկրոալիքային վառարանների արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունը իր նոր արտադրանքի համար ցանկանում է որոշել գին: Ձեռնարկությունը պատվիրել է *Ուայզ* խորհրդատվական կազմակերպությանն իրականացնել շուկայի ուսումնասիրություն և ներկայացնել նոր սերնդի վառարանի պահանջարկը՝ կախված առաջարկվող գնից: Շուկայական ուսումնասիրության արդյունքները ներկայացված են ստորև.

Միավորի վաճառքի գին	55,000 ՀՀ դրամ	65,000 ՀՀ դրամ	75,000 ՀՀ դրամ
Տարեկան վաճառք	10,000 միավոր	8,000 միավոր	6,000 միավոր

*Մանդարին* ձեռնարկության հաստատուն ծախսումները կախված արտադրության ծավալներից ենթարկվում են փոփոխություն: Ստորև ներկայացված են ձեռնարկության հաստատուն ծախսումները՝ կախված արտադրության ծավալներից.

Արտադրված քանակ	մինչև 7,500 միավոր	7,501-9,000 միավոր	9,001 և ավելի միավոր
Հաստատուն ծախսումներ	200,000 հազ. ՀՀ դրամ	500,000 հազ. ՀՀ դրամ	800,000 հազ. ՀՀ դրամ

Ձեռնարկության փոփոխուն ծախսումները մեկ միավորի համար կազմում են 10 հազ. ՀՀ դրամ և կախված չեն արտադրված քանակից:

**Պահանջվում է՝**

- 1) **Յուրաքանչյուր վաճառքի գնի համար հաշվարկել՝**
  - a) **Շահույթը** (3 միավոր),
  - b) **ծախսածածկման կետը** (3 միավոր),
  - c) **ապահովության տիրույթը** (2 միավոր)
  
- 2) **Գրաֆիկի օգնությամբ ներկայացնել ձեռնարկության ծախսածածկման կետը և ապահովության տիրույթը, եթե ձեռնարկություն որոշել է տարեկան արտադրել 6,000 բջջային հեռախոս:** (2 միավոր)

**Ընդամենը՝ 10 միավոր**